

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններն զբաղեցնելու մասին**

1. Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության երկրորդ կարգի մասնագետ-փախստականների գծով տեսուչ (ծածկագիր՝ 68-4.3-7),

2. Միսիանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության երկրորդ կարգի մասնագետ-փախստականների գծով տեսուչ (ծածկագիր՝ 68-4.3-16),

Գործակալության պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների սոցիալական և նյութական պայմանները, մասնակցում է գործակալության հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը, գործակալության աշխատանքային ծրագրերի մշակմանը, գործակալության կողմից սպասարկող տարածաշրջանում անապահով ընտանիքների հայտնաբերման աշխատանքներին և ներկայացնում առաջարկություններ:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 1-ին կարգի մասնագետ /կողմ՝ 68-4.2-8/:

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը, կազմում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր, լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները, բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ որդեգրել ցանկացող անձանց, նրանց ընտանիքի անդամներին, երեխային, անհրաժեշտության դեպքում նրանց կենսապայմաններին ծանոթանալու նպատակով:

## Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի ) պատճենները,
- աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում),
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9<sup>30</sup>-ից մինչև 12<sup>30</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 04.04.2012թ.:**

ՀՀ քաղաքացիները ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Մարզպետարանի աշխատակազմ (ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 25342):